«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների մեջ մեթոդների միջոցով ինքնուրոյնության զարգացումը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ Նազիկ Հովհաննիսյան

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Սառնաղբյուրի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն.....2

2.Սովորողների մեջ մեթոդների միջոցով ինքնուրունության զարգացումը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում.....5

3.Ինքնուրույն աշխատանքներ տարբեր մեթոդների կիրառմամբ «Պատմություն» առարկայի դասերին.....7

4.Եզրակացություն.....17

5.Օգտագործված գրականության ցանկ.....18

Ներածություն

ՈՒսուցման կազմակերպման ընթացքում բավականին կարևոր գործընթաց է սովորողների մեջ ինքնուրույնության զարգացումը: Սովորողների մոտ ինքնուրույնության զարգացումը կարելի է կազմակերպել տարբեր մեթոդների միջոցով՝ օրինակ ինքնուրույն աշխատանքի: Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից, ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Այս բոլոր հատկանիշները կարող են զարգանալ տարբեր առարկաների այդ թվում և պատմություն առարկայի շրջանում: Ինքնուրույն աշխատանքը կարելի է կազմակերպել տարբեր մեթոդների կիրառմամբ: Տարբեր մեթոդներ կարելի է կիրառել որպես ինքնուրույն աշխատանք: Ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է ոչ միայն ուսուցչի որակական հատկանիշներից, մանկավարժական կարողություններից, այլ նաև ընտրած մեթոդներից: Չկան լավ կամ վատ մեթդներ, այլ կան ճիշտ կամ սխալ ընտրված մեթոդներ: Դասապռոցեսի յուրաքանչյուր փուլում պետք է ընտրված լինեն յուրահատուկ մեթոդներ տվյալ փուլին և դասատիպին համարժեք: Ուստի բոլոր ժամանակներում էլ մեթոդների ընտրությունը կարևոր փուլ է մանկավարժների համար, հետևաբար թեման արդիականությունից դուրս լինել չի կարող

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Սովորողների ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Աշակերտների ինքնուրույն գործունեությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ինքնուրույն գործունեության նպատակը նոր սերնդին կյանքին, աշխատանքին նախապատրաստելն է: Ինքնուրույն գործունեության նպատակը բոլոր ժամանակներում որոշվում է հասարակական

պահանջներով, գիտատեխնիկական առաջընթացի զարգացումով, մանկավարժության տեսության և պրակտիկայի զարգացման մակարդակով, ուսումնական հաստատություններով և ուսուցիչների զարգացման մակարդակով: Ինքնուրույն գործունեության նպատակի սահմանման հարցը որքան հին է, այնքան էլ արդիական է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ:

- Աշակերտների ինքնուրույն գործունեության նպատակի սահմանումն է արդի ժամանակաշրջանում՝ կարևորելով այն արժեքավոր մտքերը, գաղափարները, որոնք այսօր կարելի է արդյունավետ կիրառել մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում :
- Զարգացնել սովորողի մոտ համեմատելու հմտությունը:
- Խթանել սովորողի նշված թեմյով հետազոտություն կատարելու հմտության կատարելագործումը:
- Սահմանել ռազմավարություն, որը կնպաստի թեմայի համակողմանի ուսումնասիրությունը:
- Առկա գիտելիքների հիման վրա կատարելագործել սովորողի վերլուծական և քննադատական մտածողությունը, լուծումներ գտնելու և առաջարկելու կարողությունները:
- Թեման ուսումնասիրելուց և վերլուծելուց հետո սովորողի հետագա անելիքները նախանշելու և զարգացման ուղղիները կանխատեսելու կարողությունների կատարելագործում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ:

- Բնութագրել աշակերտների ինքնուրույն գործունեության նպատակը աշխատանքը կատարելու ընթացքում:
- Բնութագրել աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը:
- Հետազոտել ավանդական և ժամանակակից մեթոդների ներդրման արդյունավետությունը, ուսուցման գործընթացում:

- Աշակերտների՝ դասապռոցեսի ներգրավվածության մակարդակի բարձրացման գնահատում:
- Արդյունքների համեմատական վերլուծություն:

Սովորողների մեջ մեթոդների միջոցով ինքնուրունության զարգացումը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում

«Ինքնուրույնություն» և «ինքնուրույն աշխատանք» արտահայտությունների լուսաբանում:

Դասի կազմակերպամն ընթացքում ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: ՈՒսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ, և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն աշխատանք: Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել, բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ: Նախ տեսնենք, թե ինչ են իրենցից ներկայացնում ինքնուրույնությունը և ինքնուրույն աշխատանք արտահայտությունները: Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև[1]: Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը[2]:

Ինքնուրույն աշխատանքներ տարբեր մեթոդների կիրառմամբ «Պատմություն» առարկայի դասերին

1.Վենի դիագրամներ

Վենի դիագրամը զարգացնում է տարբեր իրադարձություններ, գաղափարներ կամ կերպարներ կամ կերպարներ համադրելու, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները դուրս բերելու հմտություններ: Վենի դիագրամը բաղկացած է իրար հատող շրջագծերից: Դրանց հատման մասում գրվում են համեմատության ընդհանրությունները, իսկ չհատվող հատվածներում՝ յուրաքանչյուրին վերաբերող տարբերությունները :

Օրինակ՝ Համեմատենք հայոց պատմության երկու թագավորների՝ Արտաշես I-ի, Լևոն I Մեծագործի և մեկ այլազգի միապետի Բյուզանդիայի կայսր Հուստինիանոս I-ի պետական-քաղաքական գործունեությունը: Ահա հարցերի օրինակներ, որոնք օգտակար կլինեն բնութագրելու նրանց:

-Ի՞նչ մանրամասներ կարող եք ներկայացնել նրանց պետական-քաղաքական գործունեությունը դասակարգելու համար:

-Նրանց իրականացրած ո՞ր քայլերը կարող են ներկայացնել նրանցից յուրաքանչյուրի պետական կառավարման հայեցակարգերը:

-Որոնք են գործիչների իրականացրած այն քայլերը, որոնց հիման վրա կարելի է վերհանել պետական կառավարման նրանց որակները:

1.Արտաշես I

- Ք.ա. 201թ. սելևկյան զորքով ներխուժում է Հայաստան և տապալում Երվանդ IV-ին ու դառնում Հայաստանի կառավարիչ: Ք.ա. 190թ. Հռոմի և Սելևկյան պետության միջև տեղի ունեցած Մագնեսիայի ճակատամարտից հետո Ք.ա. 189թ. իրեն հռչակում է Մեծ Հայքի թագավոր ու դրանով վերականգնում Մեծ Հայքի անկախությունը:
- Ամուսնանում է Ալլանների արքայադուստր Սաթենիկի հետ:

- Հողային և ռազմական բարեփոխումներ է իրականացնում: Պետության վարչական նոր բաժանում է կատարվում՝ վարչական միավորներն անվանելով հունարեն «ստրատեգիաներ» եզրույթով:
- Կարողանում է Մեծ Հայքին վերամիավորել մի շարք հայակական տարածքներ:
- Նպաստում է հայկական միջավայրում հելլենիստական մշակույթի տարածմանը[3]:

Հուստինիանոս I

- Հուստինիանոս I-ը ծագում էր գյուղացու ընտանիքից, սակայն կարողացավ հասնել մինչև իսկ կայսրի տիտղոսին՝ (527-565թթ.):
- Ամուսնանում է Թեոդորայի հետ, որը հունական ծագում ուներ:
- Նոր օրենսգիրք է ստեղծում, որը անվանվում է «Հուստիանոսի օրենսգիրք»:
- Բարեփոխում է Բյուզանդական կայսրության բանակը, փոխելով մինչև այդ ընդունված Դիոկղետիանոս կայսեր վարչական բաժանումները՝ վարչական ավելի փոքր միավորներ է ձևավորում:
- 535-554թթ. տարբեր պատերազմներ («Իտալական պատերազմներ») է հրահրում Հռոմը նվաճած գոթերի դեմ՝ այդպիսով փորձելով վերականգնել Հռոմեական կայսրության երբեմնի սահմանները:
- Կրոնական նոր քաղաքականություն է վարում Բյուզանդական կայսրության տարածքում:

Լևոն I Մեծագործ

- 1187թ. ստանձնում է իշխանական գահը, որը նրան փոխանցում է եղբայրը՝ Ռուբեն I I I: Իսկ 1198թ. հունվարի 6-ին դառնում է թագավոր, որով էլ Կիլիյան Հայաստանը ճանաչվում է որպես թագավորություն:
- Ամուսնանում է Կիպրոսի թագավոր Ամորի Լուսինյանի դուստր Սիպիլի հետ:
- 1194թ. Անտիոքի իշխանապետության հետ պայմանագիր է կնքում, որով Կիլիկյան Հայաստանին ծովափնյա խոշոր տարածքներ են միանում:
- Երկրի տարածքում նոր բերդեր է կառուցում, բարեփոխում է բանակը, ինչպես նաև Վենետիկի, Ջենովայի հետ առևտրային պայմանագրեր է կնքում:
- Իր դուստր Զապելին հռչակում է թագաժառանգ:



Դիագրամ կազմելու երկրորդ փուլ. Խմբային աշխատանք

Վենի անհատական դիագրամները կազմելուց հետո կարելի է կազմակերպել խմբային խաղ:

1. Սովորողները բաժանվում են խմբերի և համեմատում են իրենց կատարած աշխատանքն ու ստեղծում մեկ միասնական դիագրամ:
2. Յուրաքանչյուր խումբ նշում է գործչի իրականացրած հնարավորինս շատ քայլեր, կենսագրական մանրամասներ, որոնց հիման վրա էլ լրացվում է ստեղծվող միասնական դիագրամը: Հաղթում է այն խումբը, որն ունենում է առավել մեծ թվով փաստերով հագեցած համեմատական վերլուծություն՝ Վենի դիագրամ:

Պատմա-համեմատական մեթոդի կիրառումը ՄԱԿ-ի ձևավորումը և կառույցը թեմայի դասավանդման ընթացքում

Պատմահամեմատական մեթոդ պատմական գիտելիքներ ձեռք բերելու և ներկայացնելու ամենատարածված միջոցներից է: Կարելի է ասել, որ առանց համեմատության չի կարող իրականացվել ոչ մի գիտական հետազոտություն: Համեմատության եղանակը պատմական ճանաչողությունում օգտագործվել է դեռևս անտիկ դարաշրջանում, երբ պատմագիրներն առաջնորդվել են պատմության շրջափուլային (ցիկլիկ) փոփոխման հայեցակարգով: Այդ հայեցակարգում համեմատությունը հանդես էր գալիս որպես փակ, կրկնվող շրջափուլերի մասին պատկերացումների ստեղծման միջոցներից մեկը: Դրանում գործնականում կարող էին համեմատվել ցանկացած դեպք, երևույթ, գործընթաց: Պետք է նկատել, որ պատմահամեմատական մեթոդի առաջացման սկզբնական շրջանում բացակայում էր հասարակական երևույթների որակական որոշակիության պատկերացումը: Նոր ժամանակներում պատմության շրջափուլային փոփոխման ուսմունքը փոխարինվեց Վիկոյի շրջապտույտի տեսությամբ: Այն հիմնված էր առանձին դեպքերի և ամբողջական դարաշրջանների համեմատության վրա: Դրանցում նա վեր է հանել տարբերությունները, թեև հիմնականում՝ ի վնաս անհատականի, փնտրել է նմանը, կրկնվողը, օրինաչափը: Նա զրկել է պատմության շրջապտույտի գաղափարը երևույթների համադրման ռացիոնալորեն հիմնավորված չափանիշից: Այդ առումով լուսավորական պատմագրության բնորոշ գծերից է այն, որ ունի նման չափանիշ: Դա համաշխարհային պատմության միասնականության վերաբերյալ համոզմունքն է՝ որպես միասնական և անփոփոխ մարդկային բնության արդյունք: Լուսավորիչները պատմահամեմատական մեթոդն օգտագործում էին շատ լայն. համեմատում էին նույնիսկ այն, ինչը սկզբունքորեն համեմատել չէր կարելի: Համեմատության չափանիշը միասնական և անփոփոխ մարդկային բնությունն էր: Այդպիսի ըմբռնումը խանգարում էր երևույթների անընդմեջ փոփոխվող աշխարհում ճանաչելու առանձնահատուկը, յուրօրինակը, մտածողությունն ուղղորդում էր նմանի, ընդհանրականի բացահայտմանը: Ուստի

լուսավորական շրջանում պատմահամեմատական մեթոդի կիրառումը հանգեցրել է մակերեսային համեմատությունների և համանմանությունների (անալոգիաների) առաջադրմանը:

Նկատենք, որ պատմահամեմատական մեթոդի էությունը կախված է պատմական իրականության բնույթից: Այն մի կողմից անհատական է, անկրկնելի, մյուս կողմից գործ ունենք նմանի, ընդհանրականի հետ: Չէ՞ որ մարդիկ և հասարակական կյանքն ու միջավայրն ունեն ոչ միայն տարբերություններ, անհատականություն, այլև ընդհանրություններ, նմանություններ[4]:

Պատմահամեմատական մեթոդը թույլ է տալիս համադրման, համեմատության միջոցով անհատականի մեջ բացահայտել ընդհանրականն ու նմանը: Համեմատությունն արդյունավետ կլինի այն դեպքում, եթե գործ ունենանք նույն կարգի, նույն հիմքերով, առավել շատ ընդհանրական, էական ներքին հատկանիշներ ունեցող օբյեկտների, երևույթների հետ: Հասարակական կյանքը ոչ թե դեպքերի պարզ ընթացք է, այլ որակական ամբողջությունների, փուլերի դինամիկ հաջորդափոխություն: Ուստի պատմական ճանաչողության այդ փուլերի առանձնացումը կարևոր խնդիր է: Այդպիսի ամբողջությունների, փուլերի բացահայտումը ևս իրականացվում է համեմատության միջոցով, սակայն որոշ մտածողներ գտնում են, որ դա գիտական ճանաչողության, վերլուծության առանձնահատուկ մեթոդ է: Այն անվանում են տիպաբանացման մեթոդ: Դրա խնդիրն է օբյեկտներին, երևույթներին, գործընթացներին բնորոշ էական հատկանիշների միջոցով կարգավորել, խմբավորել դրանք որպես որակապես որոշակի տիպեր, դասեր, խմբեր:

Ուսուցիչը պետք է դիտարկի առկա փաստերը՝ նախագծելով դրանց կանխատեսելի և անկանխատեսելի զարգացումներն ու հետևանքները: Յուրաքանչյուր մեթոդի ճիշտ ընտրությունը պատմաբան-ուսուցչի համար ելակետային է: Դասապրոցեսում հաջորդական և համակարգված կերպով կիրառվող այս կամ այն մեթոդը ենթադրում է փաստերի ամբողջական հետազոտում՝ դրանց պատմական, ժամանակագրական և տարաբնույթ այլ

զարգացումներին զուգընթաց: Պատմաբան-ուսուցիչը կարող է դասապրոցեսի խթանման, իմաստավորման և կշռադատման (ԽԻԿ) փուլերում կիրառել ուսուցման փոխներգործուն մի շարք մեթոդներ: ԽԻԿ-ը ուսուցման ժամանակակից մեթոդների համակարգ է, որի միջոցով ապահովվում է դասապրոցեսի փուլային կազմակերպումը: Այդ փուլերն են.

- խթանման
- իմաստավորման
- կշռադատման

Փուլերից յուրաքանչյուրի առանձնահատկությունը հարկ է դիտարկել պատմական գիտելիքների յուրացման արդյունավետության ապահովման տեսանկյունից:

Պատմության դասապրոցեսի խթանման փուլի առանցքային նպատակներն են՝

- նոր նյութի վերաբերյալ սովորողների շրջանում առկա գիտելիքների կամ տեղեկացվածության մակարդակի բացահայտումը,
- նրանց ակտիվ մասնակցության ապահովումը նյութի քննարկման գործընթացին,
- սովորողների իմացական և ճանաչողական մղումների գործնական ակտիվացումն ու խթանումը, գիտելիքի ձեռքբերման պահանջմունքի ձևավորումը:

Դասապրոցեսի այս փուլում առավել նպատակահարմար է կիրառել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝

- ուղեղային մտագրոհը,
- պրիզման,
- ձնագնդի մեթոդը

Դասի խթանման փուլում կիրառելով «ուղեղային մտագրոհ» մեթոդը՝ պատմաբանուսուցիչը նախ և առաջ հստակեցնում է դասի թեման, նպատակն ու լուծելիք խնդիրները, այնուհետև մշակում է «լավագույն տարբերակի» ընտրության չափանիշներն ու նախագծում դասի ընթացքը՝ դասարանի քննարկմանը ներկայացնելով որևէ պատմական հիմնախնդիր: Նա

սովորողներից ակնկալում է խնդրի լուծման տարաբնույթ տարբերակներ, որի համար խթանում է նրանց ստեղծագործական, իմացական և ճանաչողական ակտիվությունը: Քննարկմանն ակտիվորեն մասնակցում են դասարանի բոլոր անդամները՝ հանդես գալով մերթ մտքերի և գաղափարների առաջադրողների, մերթ՝ քննադատների դերում: Այս մեթոդի կիրառման պայմաններում ուսուցչի կողմից դասապրոցեսում գործադրվում են գործունային և անձնակենտրոն մոտեցումներ:

«Մտագրոհ» մեթոդն ունի կիրառման որոշակի փուլեր: Դրանք են՝

- գաղափարների շտեմարանի ձևավորման,
- ձևավորված գաղափարների վերլուծման,
- ստացված արդյունքների մշակման:

Դասի խթանման փուլում նպատակահարմար է նաև «Պրիզմա» փոխներգործուն մեթոդի կիրառումը: Այս մեթոդը նպաստում է սովորողների ազատ և անկաշկանդ մտածողության զարգացմանը: Պրիզմայի հիմնական նպատակն է ներկայացվող պատմական երևույթի, փաստի, հասկացության, իրադարձության կամ գաղափարի վերաբերյալ սովորողների ենթագիտակցության մեջ զուգորդված կապերի արձանագրումն ու բացահայտումը: «Պրիզմա» ակտիվ մեթոդն ունի գծագրական դասակարգչի ձև, ինչի շնորհիվ սովորողների մտքի զարգացման ընթացքը դառնում է ակներև ու պատկերավոր: Սույն մեթոդի կիրառումը ապահովում է դասապրոցեսի հաջող մեկնարկը:

Նորագույն պատմության դասընթացը հանդիսանում է ընդհանուր պատմության տրամաբանական ավարտը: Ուսուցիչը հնարավորություն է ունենում սովորողների մեջ ձևավորելու մի շարք կարևորագույն աշխարհայացքային գաղափարներ և հասկացություններ:

Ուսուցիչը յուրաքանչյուր դասընթացի համար պետք է իրականացնի ընթացիկ նախապատրաստում, որն իր մեջ ընդգրկում է դասի անցկացման պլանը: Պլանում պետք է տրված լինեն.

դասի նպատակները,

դասի տիպը,

դասի անցկացման հիմնական մեթոդը, դասի անցկացման լրացուցիչ մեթոդը (այն դեպքում, եթե սովորողները պատրաստ չլինեն հիմնական մեթոդի կիրառմանը),

դասի բովանդակության վերաբերյալ ուսուցուղական նյութերը (թեմայի վերաբերյալ քննարկումներ, գրատախտակին աղյուսակների կազմում ու լրացում և այլն),

դասի ժամանակ օգտագործվող պարագաները կամ դասի կահավորումը,

նոր նյութի հաղորդում, սովորողների կողմից նյութի ընկալման մակարդակի ստուգումը,

գնահատման համակարգը,

տնային աշխատանքի հանձնարարումը:

ՄԱԿ-ի ձևավորման գործընթացի, գլխավոր կառույցների գործառույթների թեման ընդգրկված է նաև դպրոցական դասագրքում, այն վերաբերում է համաշխարհային պատմության նորագույն շրջանին:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

Կարողանալ բացահայտել ՄԱԿ-ի ձևավորման նախադրյալները, վերլուծել պատերազմի ավարտական փուլում և հետպատերազմյան տարիներին աշխարհում ձևավորված իրադրությունը, բացատրել ՄԱԿ-ի հիմնադրման, որպես համաշխարհային խաղաղապահ կառույցի, միջազգային հակամարտությունների բանակցային ճանապարհով լուծման կարևորությունը ողջ աշխարհի համար: Դրանից հետո պետք է համեմատել և համադրել մեկ այլ նմատապ կառույցի, մասնավորապես Ազգերի լիգայի հետ:

Համեմատական-համադրական մեթոդը հիմնված է ուսումնասիրվող երևույթների միջև նմանության կամ տարբերության բացահայտման, ինչպես նաև մեկի նկատմամբ մյուսի առավելությունների հաստատման վրա: Այն հետազոտության արդյունավետ մեթոդ է, որը հնարավորություն է տալիս համեմատության օգնությամբ բացահայտել ՄԱԿ-ի և Ազգերի լիգայի զարգացման մակարդակների ու միտումների օրինաչափությունները, ընդհանրությունները և առանձնահատկությունները[5]:

Մատրիցներ՝ երկու խնդիրներ միաժամանակ գնահատելու համար

Հաճախ անհրաժեշտ է լինում վերլուծել երկու առանձին, բայց իրար հետ կապ ունեցող հարցեր: Մատրիցներն այդ վերլուծությունը համախմբելու, համակարգված մտածողություն զարգացնելու արդյունավետ միջոց են: Մատրիցներով քննարկում կազմակերպելու նպատակով՝

1. .Կազմեք մեկ ուղղահայաց և մեկ հորիզոնական հատվող գծերով մատրից՝ բաղկացած չորս մասից:



2. Մատրիցի աջ և ձախ կողմերում գրեք վերլուծության ենթակա հարցերը, օրինակ՝ աջ կողմում՝«կապիտալիզմ», ձախում՝ «կոմունիզմ»:
3. Ուղղահայաց գծով ներկայացրեք վերլուծության բաղադրիչներից մեկը, օրինակ՝ «դրական հետևանքները», «բացասական հետևանքները» և այլն:
4. Այս մատրիցում կարող եք տեղակայել քննարկման տարբեր հարցեր: Օրինակ՝ «սեփականության իրավունքը » (մի դեպքում՝ համայնական/ կոլեկտիվ սեփականություն, մյուս դեպքում՝ մասնավոր սեփականություն): Կարող եք քննարկումն ավելի զարգացնել՝ դիտարկելով, օրինակ, ԽՍՀՄ և արևմտյան պետությունների՝ մասնավորապես ԱՄՆ-ի միջև եղած տնտեսական տարբերությունները, դրանց դրական և բացասական կողմերը (հետևանքները) կամ այդ դրական և բացասական հետևանքների թողած ազդեցությունը կողմերի մրցակցության վրա (օրինակ՝ «Սառը պատերազմի» ժամանակ):

5. Սովորողներին կարող եք աջակցող հարցեր տրամադրել մատրիցը լրացնելու նատակով: Ավարտին քննարկեք մատրիցը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կատարած հետազոտության արդյունքում գալիս ենք հետևյալ եզրակացությանը՝ ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան: Ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ցանկացած դաս-ուսուցում և մեթոդների կիրառումը տալիս է սովորողներին գիտելիք: Գիտելիքների յուրացումը թույլ է և ուժեղ սովորող աշակերտների մոտ կատարվում է տարբեր ձևով: Մանկավարժի խնդիրն է հաշվի առնել աշակերտների ընդունակությունները, կարողությունները: Այս տեսակետից հետաքրքիր է Բենջամին Բլումի առաջարկած ուսուցման դասակարգումը: Բլումը գտնում է, որ ուսուցման ընթացքում աշակերտը ոչ միայն ձեռէ է բերում գիտելիքների հանրագումար և մտապահում, այլ նաև համեմատում է դրանք իր ունեցած գիտելիքների հետ: Նոր գիտելիքները դարձնում է կիրառական, գնում դեպի գիտելիքների խորացում ու վերլուծություն, ինչը նաև աշակերտի մոտ բերում է ինքնուրույն աշխատելու կարողություն: Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության միջոց է, հնար հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նաշանխված արդյունքին, գիտելիքների ձեռք բերմանը, կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

Այսպիսով ուսումնասիրել ժամանակակից մեթոդների արդյունավետության թեման իմ առաջ նպատակ էի դրել աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացագործունեության մեջ, սովորեցնել կիրառել իրենց կողմից ձեռք բերված գիտելիքները:

Օգտագործված գրականության ցանկ

1.Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան,[Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ], «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ. էջ 36

2.Մանուկյան Ն.[Ինչու՞, ինչպե՞ս], գիրք պատմություն ուսուցման//«Պարադիգմա» կրթական հիմնադրամ 2020թ. էջ 124

3.Մանուկյան Ն.[Ինչու՞, ինչպե՞ս], գիրք պատմություն ուսուցման//«Պարադիգմա» կրթական հիմնադրամ 2020թ. էջ 126

4.Մանուկյան Ն.[Ինչու՞, ինչպե՞ս], գիրք պատմություն ուսուցման//«Պարադիգմա» կրթական հիմնադրամ 2020թ. էջ 140

5.А.Т.Степанищев,[Методика преподавания и изучения истории, Част 1,]Москва 2002, ст.143.